Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

• Փորձարարական և տեսական հոդվածներ •Экспериментальные и теоретические статьи•
•Experimental and theoretical articles•

Հայաստանի կենսաբ. հանդես, 4(65), 2013

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՆԱՉ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ԲՈՒՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մ. Նալբանդյանի անվան Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ
kh-anush@yandex.ru

Գյումրիում աճող 67 տեսակի ծառերը և թփերն իրենց ծագումով Ցիրկումբորեալային կամ Եվրոսիբիրա-Կանադական, Արևելասիական, Միջերկրածովյան, Իրանաթուրանյան ֆլորիստիկ տարածաշրջաններից են: Առավել շատ հանդիպում են Բորեալային ֆլորայի ներկայացուցիչները, որոնք լավ են հարմարվել ցածր խոնավության և ցուրտ պայմաններին:

Կանաչ տնկարկներ – ֆլորիստիկ տարածաշրջան – աշխարհագրական ծագում

В г. Гюмри произрастают 67 видов деревьев и кустарников. Они по своему происхождению из Циркумбореальной или Евросибиро-Канадской, Восточноазиатской, Средиземноморской, Ирано-Туранской флористических областей. Наиболее часто встречаются представители Бореальной флоры, они лучше адаптированы к низкой влажности и к холодным условиям.

Зеленые насаждения – флористическая область – географическое происхождение

In Gyumri 67 species of trees and shrubs grow. They are from a Circumboreal or Evrosibiro-Canadian, Asian, Mediterranean, Irano-Turanian floristic areas. The most common ones are the representatives of the boreal flora, which are better adapted to low humidity and cold conditions.

Green plantings – floristic area – a geographical origin

Գյումրի քաղաքի կանաչ տնկարկների վերջին գիտական ուսումնասիրություններից [4, 5] հետո տեղի է ունեցել երկրաշարժ (1988 թ.): Այնուհետև, 1990-ական թվականներին, Հայաստանը հայտնվեց էներգետիկ և տնտեսական ճգնաժամի մեջ, որի պատճառով, ինչպես մյուս բնակավայրերում, այնպես էլ Գյումրիում, բնակչության կող-մից ներքաղաքային և մերձքաղաքային կանաչ տնկարկներում կատարվեցին զանգվա-ծային ծառահատումներ: Արդյունքում տեղի ունեցան ծառերի ու թփերի քանակական և տեսակային կազմի զգալի կրճատումներ:

Վերոհիշյալ փոփոխությունների պատճառով անհրաժեշտություն առաջացավ կա-տարել Գյումրի քաղաքի կանաչ տնկարկների բուսաաշխարհագրական վերլուծություն [2]:

Նյութ և մեթոդ: Խորոլոգիական վերլուծություն կատարելու համար ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքների կանաչ տնկարկների տեսակային կազմը: Բացահայտ-վել են ծառաբույսերի բնական տարածման արեալները, որից ելնելով որոշվել է ծառերի և թփերի ծագումն ըստ ֆլորիստիկ տարածաշրջանների:

Արդյունքներ և քննարկում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Գյումրու կանաչ տնկարկներում հաշվվում են 67 տեսակի ծառեր և թփեր, որոնք պատկանում են 46 ցեղի և 23 ընտանիքի: Բացի դրանից ուշադրություն է դարձվել դրանց աշխարհագրական ծագման վրա: Գյումրիում աճող ծառաբույսերի տաքսոնոմիական բաշխվա-ծությունը և բուսաաշխարհագրական տարածվածությունը [1-6] տրված է աղ. 1-ում:

Աղյուսակ 1. Գյումրի քաղաքի ծառաբույսերի բնական տարածման արեալները

Տեսակի անվանումը	*Բնական տարածման արեալը*
Gymnospermae – Голосеменные – Մերկասերմեր	
Cupressaceae – Кипарисовые – Նոճազգիներ	
Thuja occidentalis L. – Туя западная – Թույա արևմտյան	Հյուս. Ամերիկայի մերձատլանտյան մաս
Pinaceae – Сосновые – Սոճազգիներ	
Picea pungens Englm. – Ель колючая – Եղևնի կեռիկավոր	Հյուս. Ամերիկայի արևմտյան մաս
P. pungens v. glauca Belssn. – Ель колючая, серебристая - Եղևնի կեռիկավոր, արծաթագույն	Հյուս. Ամերիկայի արևմտյան մաս
Pinus sylvestris L. – Сосна обыкновенная – Սոճի սովորական	Արևմտ. Եվրոպա, Ռուսաստանի Եվրոպ. մաս
Angiospermae – Покрытосеменные – Ծածկասերմեր	
Aceraceae – Кленовые – Թխկազգիներ	
Acer campestre L. – Клен полевой – Թխկի դաշտային	Ռուսաստանի Եվրոպ. մաս, Ղրիմ, Կովկաս, Փոքր Ասիա, Ալժիր
A. negundo L. – К. ясенелистный (американский) – Թ. հացենիատերև	Հյուս. Ամերիկայի կենտրոնական մաս
A. platanoides L. – К. остролистный – Թ. սրատերև, լայնատերև	Եվրոպա, Կովկաս, Ֆինլանդիա, Սկանդինավիա
A. pseudoplatanus L. – К. ложноплатановый (к. белый, явор) – Թ. կեղծսոսիատերև	Կովկաս, Արևմտ. Եվրոպա, Փոքր Ասիա
Anacardiaceae – Сумаховые - Աղտորազգիներ	
Cotinus coggygria Scop. – Скумпия - Դրախտածառ	Մոլդովա, Հարավային Ուկրաինա, Ղրիմ, Միջին Ասիա, Չինաստան Հիմալայներ
Rhus coriaria L. – Сумах дубильный - Աղտոր դաբաղային	Կովկաս, Ղրիմ, Փոքր Ասիա, Իրաք, Միջերկրածով.
Betulaceae – Березовые – Կեչազգիներ	
Betula pendula Roth. – Береза бородавчатая, поникшая – Կեչի ելունդավոր	Ռուսաստանի Եվրոպ. մաս, Արևմտ. Սիբիր, Ալտայ, Կովկաս
B. litwinowii Doluch. – Б. Литвинова – Կ. Լիտվինովի	Կովկաս
Buxaceae – Самшитовые – Տոսախազգիներ	
Buxus sempervirens L. - Самшит вечнозеленый – Տոսախ մշտադալար	Ալժիր, Հյուս. և Արևել. Իսպանիա, Հարավ. և կենտր. Ֆրանսիա, Մակեդոնիա
Caprifoliaceae – Жимолостные – Ցախակեռասազգիներ	
Lonicera tatarica L. – Жимолость татарская – Ցախակեռաս թաթարական	Եվրասիա
Sambucus racemosa L. – Бузина кистистая, красная – Կոտկենի կարմիր	Արևմտ. Եվրոպա, Մերձբալթիկայից մինչև Նախակովկաս
Symphoricarpus albus (L.) Blake – Снежноягодник белый – Ձյունապտղիկ սպիտակ	Հյուս. Ամերիկայի մերձխաղաղ-օվկիանոսյան մաս
Viburnum opulus L. – Калина обыкновенная – Բռնչի սովորական	Եվրոպա, Կովկաս, Արևմտ. Սիբիր, Միջ. Ասիա, Փոքր Ասիա, Հյուս. Աֆրիկա
Celastraceae – Бересклетовые – Իլենազգիներ	
Euonymus verrucosa Scop. – Бересклет бородавчатый – Իլենի ելունդավոր	Ռուսաստան, Արևմտ. Եվրոպա մինչև Սկանդինավիա
Cornaceae – Кизиловые – Հոնազգիներ	
Cornus alba L. – Дерен белый – Ճապկի սպիտակ	Հյուս. Եվրասիա
Elaeagnaceae – Лоховые – Փշատազգիներ	
Elaeagnus angustifolia L. – Лох узколистный – Փշատենի նեղատերև	Եվրասիա
Hippophae rhamnoides L. – Облепиха крушиновая – Չիչխան դժնիկանման	Եվրոպա, Փոքր Ասիա, Հիմալայներ, Չինաստան, Մոնղոլիա, Հյուսիսային Ամերիկա
Fabaceae – Бобовые - Բակլազգիներ	
Caragana arborescens Lam. – Карагана древовидная – Կարագանա ծառանման	Սիբիր, Մոնղոլիա
Robinia pseudacacia L. – Робиния лжеакация (белая акация) – Ռոբինիա կեղծակացիա	Հյուս. Ամերիկայի արևելյան մաս
Fagaceae – Буковые – Հաճարազգիներ	
Fagus orientalis Lipsky.- Бук восточный – Հաճարենի արևելյան	Կովկաս, Ղրիմ, Բալկանյան թ-կղզի, Հյուս. Փոքր Ասիա
Quercus robur L. – Дуб летний (черешчатый) – Կաղնի ամառային	Արևմտյան Եվրոպա, Ղրիմ, Կովկաս

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՆԱՉ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ԲՈՒՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	
Grossulariaceae – Крыжовниковые – Հաղարջազգիներ	
Ribes aureum Pursh. – Смородина золотая – Հաղարջենի ոսկյա	Հյուս. Ամերիկայի արևմտյան մաս
Hippocastanaceae – Конскокаштановые – Ձիակասկազգիներ	
Aesculus hippocastanum L. – Конский каштан обыкновенный – Ձիակասկ սովորական	Բալկանյան թ-կղզու հարավը
Hydrangeaceae – Гортензиевые - Դրախտավարդազգիներ	
Philadelphus caucasicus Koehne. – Чубушник кавказский – Սրնգենի կովկասյան	Կովկաս, Փոքր Ասիա
Juglandaceae – Ореховые – Ընկուզազգիներ	
Juglans regia L. – Орех грецкий – Ընկուզենի սովորական	Բալկաններ, Փոքր Ասիա, Միջին Ասիա
Moraceae – Тутовые – Թթազգիներ	
Morus alba L. – Шелковица белая – Թթենի սպիտակ	Ճապոնիա, Չինաստան, Հնդկաստան
Oleaceae – Маслинные – Ձիթազգիներ	
Forsythia intermedia Zab. – Форзиция средняя – Ֆորզիցիա միջանկյալ	Մշակության մեջ
Fraxinus excelsior L. – Ясень обыкновенный – Հացենի սովորական	Եվրասիա
F. lanceolata Borkh. (*F. viridis* Michx.) - Я. ланцетный (я.зеленый) – Հ. նշտարաձև (Հ. կանաչ)	Հյուս. Ամերիկայի մերձատլանտյան մաս
Ligustrum vulgare L. – Бирючина обыкновенная – Կիպրոս սովորական	Կենտրոնական Եվրոպա
Syringa vulgaris L. – Сирень обыкновенная – Եղրևանի սովորական	Կենտրոնական Եվրոպա
Rosaceae – Розоцветные – Վարդազգիներ	
Armeniaca vulgaris Lam. – Абрикос обыкновенный – Ծիրանենի սովորական	Արևմտ. և Արևել. Տյան-Շան, Տիբեթ, Հյուս. Չինաստան, Հայաստան
Cerasus avium (L.)Moench. – Вишня птичья, черешня – Կեռասենի	Կովկաս, Ղրիմ, Եվրոպա, Իրան
C. vulgaris Mill. – В. обыкновенная - Բալենի սովորական	Մշակության մեջ
Crataegus orientalis Pall. –Боярышник восточный – Սզնի արևելյան	Ղրիմ, Հարավ. Հունաստան, Փոքր Ասիա
Malus baccata (L.) Borkh. –Яблоня ягодная – Խնձորենի հատապտղային	Չինաստան
M. domestica Borkh. – Я. культурная – Խ. կուլտուրական	Ավստրիա
Persica vulgaris Mill. – Персик обыкновенный – Դեղձենի սովորական	Չինաստան
Prunus divaricata Ledeb. – Слива растопыренная, алыча – Սալորենի չռված, շլորենի	Կովկաս, Միջին Ասիա
P. domestica L. – С. домашняя – Ս. կուլտուրական	Մշակության մեջ
P. spinosa L. – С. колючая, терн – Ս. փշավոր (մամխենի)	Եվրասիա
Pyrus communis L. – Груша обыкновенная – Տանձենի սովորական	Ռուսաստանի Եվրոպ. մաս, Միջին Ասիա, Արևմտ. Եվրոպա, Հայաստան
Rosa canina L. – Роза собачья – Մասրենի սովորական	Եվրասիա
R. multiflora Thunb. – Р. многоцветковая – Մ. (վարդ) բազմածաղիկ	Կորեա, Չինաստան, Ճապոնիա
Rubus caesius L. – Ежевика сизая – Մոշենի սովորական	Ռուսաստանի Եվրոպ. մաս, Արևմտ. Եվրոպա, Փոքր Ասիա, Իրան, Սկանդինավիա
R. idaeus L. – Малина обыкновенная – Մորենի սովորական, ազնվամորի	Եվրասիա, Միջ. Ասիա
Sorbus aucuparia L. – Рябина обыкновенная – Արոսենի սովորական	Ռուսաստանի Եվրոպ. մաս, Կովկաս, Արևմտ. Եվրոպա, Փոքր Ասիա, Հյուս. Աֆրիկա
Spiraea x Vanhouttei (Briot) Zabel. – Спирея х Вангутта – Ասպիրակ x Վանհուտտի	Մշակության մեջ (հիբրիդ)
Salicaceae – Ивовые – Ուռազգիներ	
Populus alba L. – Тополь белый – Բարդի սպիտակ	Եվրասիա
P. balsamifera L. – Т. бальзамический – Բ. հինածաղկավոր	Հյուս. Ամերիկայի հյուսիսային մաս
P. bolleana Lauche. – Т. Болле – Բ. Բոլլեի	Միջին Ասիա
P. laurifolia Ledeb. – Т. лавролистный – Բ. դափնիատերև	Սիբիր
P. nigra L. – Т. черный, осокорь – Բ. սև	Ռուսաստանի Եվրոպական մաս, Կովկաս, Արևմտ. Եվրոպա
P. pyramidalis Roz. – Т. пирамидальный – Բ. բրգաձև	Աֆղանստան

P. tremula L. – Осина – Կաղամախի, բ. դողդոջուն կամ անտառային	Ռուսաստանի արևմտ. մաս, Սիբիր, Հեռ. Արևելք, Ղազախստան, Ղրիմ, Կովկաս
Salix caprea L. – Ива козья, бредина – Այծուռենի	Եվրոպա
S. fragilis L. – Ива ломкая (ракита) – Ուռենի կոտրտվող	Եվրոպա, Միջին Ասիա
Tiliaceae – Липовые – Լորազգիներ	
Tilia cordata Mill. – Липа мелколистная – Լորենի մանրատերև	Արևմտ. Եվրոպա, Ռուսաստանի Եվրոպ. մաս , Ղրիմ , Կովկաս, Ուրալ
T. platyphyllos Scop. – Л. крупнолистная – Լ. խոշորատերև	Ռուսաստանի Եվրոպ. մաս, Արևմտ. Եվրոպա
Ulmaceae – Ильмовые – Թեղազգիներ	
Ulmus laevis Pall. – Вяз гладкий (в.обыкновенный) – Թեղի հարթ	Եվրոպա, Ղրիմ, Նախակովկաս, Անգլիա
U. pumila L. – В. приземистый (мелколистный) – Թ. գետնամերձ	Սիբիր, Հեռ. Արևելք, Չինաստան
Vitaceae – Виноградовые – Խաղողազգիներ	
Partenocissus quinquefolia (L.) Planch. – Девичий виноград пятилисточковый – Կուսախաղող հնգատերև	Հյուս. Ամերիկայի արևելյան մաս
Vitis vinifera L. – Виноград культурный – Խաղող կուլտուրական	Եվրոպա, Արևմտ. Ասիա, Հյուս. Աֆրիկա

Աղ. 1-ի տվյալներից պարզաբանվել են յուրաքանչյուր բույսի ծագումն ըստ ֆլորիստիկ տարածաշրջանների:

Գյումրի քաղաքի ծառերը և թփերն իրենց ծագումով հետևյալ ֆլորիստիկ տարածաշրջաններից են՝ Ցիրկումբորեալային կամ Եվրոսիբիրա-Կանադական, Արևելասիական, Միջերկրածովյան, Իրանաթուրանյան:

Ցիրկումբորեալային կամ Եվրոսիբիրա-Կանադական տարածաշրջանը Գյումրիում ներկայացված է հետևյալ 49 բուսատեսակներով՝ *Thuja occidentalis, Picea pungens, P. pungens v.glauca, Pinus silvestris, Acer campestre, A. negundo, A. platanoides, A. pseudoplatanus, Betula pendula, B. litwinowii, Cotinus coggygria, Hippophae rhamnoides, Lonicera tatarica, Sambucus racemosa, Symphoricarpos albus, Viburnum opulus, Euonymus verrucosa, Cornus alba, Elaeagnus angustifolia, Robinia pseudacacia, Quercus robur, Ribes aureum, Fraxinus excelsior, F. lanceolata, Ligustrum vulgare, Syringa vulgaris, Cerasus avium, Malus domestica, Prunus divaricata, P. spinosa, Rosa canina, Rubus caesius, Rubus idaeus, Sorbus aucuparia, Populus alba, P. balsamifera, P. bolleana, P. laurifolia, P. nigra, P. pyramidalis, P. tremula, Salix caprea, S. fragilis, Philadelphus caucasicus, Tilia cordata, T. platyphyllos, Ulmus laevis, Partenocissus quinquefolia, Vitis vinifera:*

Արևելասիական տարածաշրջանը Գյումրիում ներկայացված է հետևյալ 7 բուսատեսակներով՝ *Caragana arborescens, Morus alba, Armeniaca vulgaris, Malus baccata, Persica vulgaris, Rosa multiflora, Ulmus pumila*: Միջերկրածովյան տարածաշրջանը Գյումրիում ներկայացված է հետևյալ 6 բուսատեսակներով՝ *Buxus sempervirens, Fagus orientalis, Aesculus hippocastanum, Juglans regia, Rhus coriaria, Crataegus orientalis*:

Իրանաթուրանյան տարածաշրջանը Գյումրիում ներկայացված է հետևյալ 1 բուսատեսակով՝ *Pyrus communis*: Որևէ ֆլորիստիկ տարածաշրջանում չեն ներկայացված հետևյալ 4 տեսակները՝ *Forsythia x intermedia, Spiraea x Vanhouttei, Cerasus vulgaris, Prunus domestica:*

Բուսատեսակների քանակն ըստ ֆլորիստիկ տարածաշրջանների ներկայացված է աղ. 2-ում:

Աղյուսակ 2. Ծառաբույսերի տեսակների քանակական բաշխվածությունն ըստ ֆլորիստիկ տարածաշրջանների

Ֆլորիստիկ տարածաշրջաններ	Տեսակների քանակը	%-ը տեսակների ընդհանուր քանակից
Ցիրկումբորեալային կամ Եվրոսիբիրա-Կանադական	49	73.13
Արևելասիական	7	10.45
Միջերկրածովյան	6	8.96
Իրանաթուրանյան	1	1.49
Չեն ներկայացնում	4	5.97
Ընդամենը	67	100

Խորոլոգիական վերլուծությունը ցույց է տալիս, որ Գյումրի քաղաքում առավել հարուստ է ներկայացված Ցիրկումբորեալային կամ Եվրոսիբիրա-Կանադական ֆլորիստիկ տարածաշրջանը՝ 73.13%: Աննշան է ներկայացված Իրանաթուրանյան ֆլորիստիկ տարածաշրջանը՝ 1.49%: Դա բացատրվում է նրանով, որ Գյումրիում Ցիրկումբորեալային կամ Եվրոսիբիրա-Կանադական ֆլորայի ներկայացուցիչները լավ են զգում իրենց, իսկ ավելի ջերմասեր և խոնավասեր բույսերը տուժում են ջերմության ու խոնավության պակասից և մեծամասամբ դուրս են մղվել կանաչ տնկարկների տեսականու կազմից: Խորոլոգիական ներկա կազմի վրա ազդեցություն են թողել նաև 1992-1995 թվականների զանգվածային ծառահատումները, որոնք պատճառ են հանդիսացել տեսակային կազմի կրճատման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Վարդանյան Ժ.Հ.* Ծառագիտություն, Երևան, ՀԳԱ, 2005, 370 էջ
Խաչատրյան Ա.Ս. Գյումրի քաղաքի կանաչ տնկարկների դենդրոֆլորան և դրա հարստացման հեռանկարները, Կենս. գիտ. թեկ. ատենախոսության սեղմագիր, Երևան, 22 էջ, 2008:
2. Аннотированный каталог деревьев и кустарников ботанических садов и дендропарков Армянской ССР, Бюлл. Бот. сада АН Арм ССР, Ереван, 27, 164 с. 1985.
3. *Арутюнян Л.В.* Состояние озеленения и дендрологический ассортимент населенных пунктов Ширака, Бюлл. Бот. сада АН Арм ССР, Ереван, с.5-29, 1966.
4. *Арутюнян Л.В., Абрамян А.Г. и др.* Ботанико-географический анализ дендрологического состава зеленых насаждений г. Ленинакана, Биолог. журн. Армении, Ереван, *37*, 9, с. 713-718, 1984.
5. *Варданян Ж.А.* Научные основы интродукции древесных растений в Армении, Ереван, изд.-во “Гитутюн” НАН РА, 400 с., 2012.

Ստացվել է 04.12.2012